




XX դարի հայ արվեստագետներից համեմատաբար քչերն են արժանացել իրենց ստեղծագործությանը նվիրված որքան և իցե հիմնարար, ամբողջական հրատարակությունների, լինեն դրանք մենագրություններ, թե ալբոմներ: Սա ճշմարիտ է հատկապես օտար երկրներում ապրած հայազգի վարպետների համար, որոնք, իրենց մեծ ու փոքր ավանդը մոռելով ազգային մշակույթի զարգացման մեջ, եզակի բացառություններով, զուրկ են եղել հայրենիքում լայն ճանաչում ու ժողովրդականություն վայելելու և ըստ պատշաճի գնահատվելու երջանիկ հնարավորությունից:

Ամերիկահայ նկարիչ Քաջագունի Քեչեճյանը (1924-2004), որն արվեստասեր հասարակությանն ավելի հայտնի է Քաջազ ստեղծագործական ծածկանունով, ճաշակել է կյանքի օրոք նման հրատարակության արժանանալու բերկրաբքը:

2004 թ.՝ վաստակաշատ արվեստագետի 80-ամյակի օրերին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունն ընթերցողի դատին հանձնեց «Քաջազ. գեղանկար, գրաֆիկա, մոնտաժ» ալբոմը, որտեղ ընդգրկվեցին նրա հիմնական աշխատանքների վերատպությունները, ինչպես նաև մի շարք հոդվածներ ու փաստավավերագրական նյութեր:

Այսօր՝ հնգամյա ընդմիջումից և, ցավոք, նկարչի վախճանից հետո, սեղանին է նրան նվիրված անդրանիկ մենագրությունը: Գիրքը արվեստագետի 85-ամյակի առթիվ լույս է տեսել ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության համատեղ ջանքերով: Այն բացում է «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարը: Պրակը երկլեզու է: Հայերեն բնագրի հեղինակն է Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը, անգլերեն թարգմանությունը՝ Արիս Սևակի: Մենագրությունը պատկերազարդ է, ամփոփում է 60-ից ավելի գունավոր վերատպություն, ինչպես նաև փաստավավերագրական լուսանկարներ: Հրատարակության նախապատրաստմանն ու տպագրությանը ֆինանսապես աջակցել է նկարչի այրին՝ ներկայումս ԱՄՆ-ում բնակվող տիկին Սաթենիկ Խաչիկյան-Քեչեճյանը:

Քաջազը հարուստ, իրադարձություններով լի կենսագրություն է ունեցել: Ծնվել և նախնական կրթությունը ստացել է Բեյրութում (Լիբանան): Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1947-ին, հայ մշակույթի մի շարք նշանավոր գործիչների հետ տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, որտեղ ապրել և աշխատել է շուրջ քառորդ դար: Մենագրության հեղինակի խոսքերով՝ «Քաջազի համար այդ տարիները դարձան ինչպես անձնական երջանկության, ընտանեկան բերկրալի կյանքի, այնպես էլ հոգևոր ու մտավոր աճի, ստեղծագործական ինքնաճանաչման, կայացման շրջան: Հենց այդ ժամանակ նա ձևավորվեց որպես արվեստագետ, անմնացորդ նվիրվեց նկարչությանը, ճշտեց արվեստում իր անելիքը, գտավ

գծի և գույնի միջոցով արտահայտվելու, սեփական մտքերն ու ապրումները տպավորելու յուրովի կերպը» (էջ 7): 1973-ին նկարիչը լքում է Հայաստանը, որպեսզի մեկ տարի անց հիմնավորվի ԱՄՆ-ում, որտեղ և բոլորում է իր օրերը:

Գրքի հեղինակն ամենայն ջանասիրությամբ մանրակրկիտ ուսումնասիրել է վարպետի կյանքն ու գործը: Ձեռքի տակ եղած տպագիր և արխիվային աղբյուրները «բանեցվել» են առավելագույնս՝ ինչպես շարադրանքը տեղեկատվությամբ հագեցնելու, այնպես էլ այն սկզբից նեթ փաստական ամուր, հուսալի հիմքի վրա կառուցելու նպատակով: Աշխատությունը բաղկացած է երկու գլխից: Առաջին գլխում մանրամասն ներկայացվում է նկարչի կենսագրությունը, երկրորդում հանգամանորեն դիտարկվում է նրա արվեստը՝ ամենատիպական, ծրագրային աշխատանքների օրինակով: Հենց այդ գործերում է, որ «...հայկական շունչը, ազգային ոգին, – Ա. Աղասյանի բնորոշմամբ, – դրսևորվել են ոչ միայն դրանց գաղափարական՝ թեմատիկ ու կերպարային բովանդակության, այլև գեղարվեստական մտածողության, նկարչական ինքնատիպ լեզվի, ստեղծագործական անկրկնելի ձեռագրում» (էջ 49-50):

Ելնելով թեմայի բնույթից՝ հետազոտողը նախընտրել է նյութի ժամանակագրական մատուցման սկզբունքը, որին հետևում է թե՛ առաջին և թե՛ երկրորդ գլխում: Նա համակողմանիորեն վերլուծում է Քաջազի գեղանկար ու գրաֆիկական երկերը՝ դրանց ժանրաթեմատիկ, բովանդակային, կերպարային ու ոճաձևաբանական առանձնահատկություններով: Հեղինակը կարևորում է հատկապես արվեստագետի ազգային մտածողության և արտահայտչալեզվի, գունային ընկալումների, կատարողական տեխնիկայի հետ կապված խնդիրները՝ դրանք համարելով առանցքային Քաջազի ստեղծագործությունն ըմբռնելու և ճիշտ իմաստավորելու համար: Արվեստաբանի հայացքը ներթափանցում է վարպետի հարուստ ներաշխարհը՝ բացահայտելու նրա պոետիկան, որն իր մեջ զարմանալիորեն համատեղում է դրամատիզմն ու լավատեսությունը, էպիկականն ու քնարականը: Այդ բարդ և ինքնաբավ ներաշխարհի կենտրոնում լրջագույն մտորումներ են մարդ արարածի, նրա էության ու ճակատագրի մասին, ինչպես նաև ազգային պատկանելության, հայրենի ժողովրդի պատմական անցյալի հետ օրգանական, կենդանի կապի սուր գիտակցում: Տեքստը քայլ առ քայլ «վերձանում» է Քաջազի անպաճույճ, զուցեն պարզ թվացող պլաստիկական «բարբառը», որը, զարգացման ու փոփոխության ենթարկվելով, այդուհանդերձ, պահպանում է ներքին միասնականությունը, նկարչի անհատականության անջնջելի հետքը: Պատմագեղարվեստական նյութի խոհուն, նրբանկատ «ընթերցմամբ» ուսումնասիրողը մեզ է հասցնում Քաջազի գեղագիտական «ուղերձն» ու բարոյագիտական քարոզը, կերտում նրա գունեղ ու գրավիչ ստեղծագործական դիմապատկերը: Ի դեպ, դա արվում է հետազոտական «զինանոցի» առձեռն բոլոր միջոցներով, որոնք ապահովում են վերլուծական մտքի բնականոն ընթացքը՝ վարկածներ, մեկնաբանումներ, համեմատություններ, հղումներ: Քաջազի ստեղծագործությունը չի դիտվում ինքնին, մեկուսացված, այլ ներգծվում է ժամանակի պատմամշակութային համատեքստին:

Իրավացիորեն նշելով Քաջազի ոճի, պատկերալեզվի ազգային արմատները՝ հետազոտողն ամենևին չի անտեսում նրանց առնչությունը եվրոպական արվեստի որոշ միտումներին: Նա ուրվագծում է Քաջազի և վերջիններիս միջև եղած իրական աղերսներն ու շփումները (սկսած ֆոլիզմից մինչև պրիմիտիվիզմ), սակայն գերծ մնում հայ վարպետին որևէ կոնկրետ ոճական ուղղության շրջանակներում արհեստականորեն «պարփակելու»

գայթակղությունից: Քաջագի գեղարվեստական ընկալունակությունն առաջիններից է նկատել նկարիչ-գրող Ուլդիս Ջեմգարիսը. «Նրա (Քաջագի - Ա. Ա.) պատկերման եղանակը, որ թվում է այնքան հնադարյան ու արխայիզմի հասնելու չափ պարզեցված, միաժամանակ լիովին կռահել է ժամանակակից արվեստի սկզբունքները: Քաջագի գեղանկարչությունը, որն այնքան անձնականորեն «պրիմիտիվ» է ու միաժամանակ իր բնույթով բացահայտորեն հայկական, իր մեջ կրում է նաև ամբողջ աշխարհի պլաստիկ մտածողության էվոլյուցիան»¹: Աշխատության մեջ այս ընդհանուր դրույթն ստանում է դարձյալ որոշակի և առարկայական իմաստավորում:

Հավելենք, որ մենագրությունը շարադրված է ոչ միայն պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, այլև հստակ, պատկերավոր հայերենով, որն էապես նպաստում է նյութի առավել խոր ընկալմանը: Հուսով ենք, բնագիրն արժանի գուգահեռ է գտել անգլերեն թարգմանության մեջ: Ընդհանրապես, գիրքն առանձնահատուկ սիրով ու խնամքով է կազմած. հարմար «ձևաչափ», ճաշակով ձևավորում, որակյալ վերատպություններ, որոնք իրենց հերթին զգալիորեն աշխուժացնում են շարադրանքը, տեղ-տեղ էլ լրացնում այն: Համոզված ենք, որ մենագրությունը կհետաքրքրի ոչ միայն մասնագետներին, այլև հայ մշակույթի, մասնավորաբար կերպարվեստի խնդիրների նկատմամբ ոչ անտարբեր ամենալայն ընթերցողին:

ԱՎԱԳՅԱՆ Ա. Վ.

Արվեստագիտության թեկնածու

¹ Քաջագ, Գեղանկար, գրաֆիկա, մոնտաժ, Ե., 2004, էջ 34: